

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ -1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ

Միջանկյալ հաշվետվություն

1 եռ. 2009թ

Հասցե	ք.Երևան 0023, Արշակունյաց փ, 12
Հեռախոս	. 52-53-21
Ֆաքս	52-57-13
Էլփոստ	Info@yerjewel.com
Ինտերնետ կայք	www.yerjewel.com

Կառավարման մարմինների միջանկյալ զեկույց

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ն զբաղվում է ոսկերչական իրերի, ժամացույցների, պետական մեդալների, շքանշանների, հուշամեդալների արտադրությամբ:

Ընկերությունն ունի շքանշանների, մեդալների, հուշամեդալների և «ԳՆՈՍՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրական գործունեությունը բարեհաջող իրականացնելու համար անհրաժեշտ հարմարությունները: Ընդլայնման ծրագրի համար Ընկերությունը լրացուցիչ արտադրական հարմարություններ հիմնելու կարիք ունի: Ներկայումս արտադրությունն իրականացվում է հիմնական և հարակից արտադրամասերում, թանկարժեք մետաղների հալման հոսքագծերով և այլ մեքենաներով:

Ընկերության շքանշանների, մեդալների, ոսկյա հուշամեդալների և «ԳՆՈՍՈՆ» ֆիրմային ոսկյա ժամացույցների արտադրանքի հիմնական մասը իրացվում է ներքին շուկայում և արտահանվում է ԱՊՀ երկրներ, մնացած մասը այլ երկրներ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ոսկու գնի կտրուկ տատանումների հետևանքով ռիսկերի կառավարման հնարավորությունը նվազում է, որի արդյունքում ոսկերչական իրերի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների շրջանակը կտրուկ նվազում է: Սակայն ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՍՈՆ» ԲԲԸ-ն հենվելով հզորությունների և ճշգրիտ սարքավորումների տեխնիկական հզորությունների վրա, կատարում է կոնստրուկտորատեխ-նոլոգիական մշակման, նոր ոսկերչական իրերի ստեղծման և արտադրությունում ներդնելու ուղղությամբ աշխատանքներ՝ միաժամանակ ապահովելով շուկայի մարկետինգային ուսումնասիրություններ և նոր գնորդների հայտնաբերում:

Ընկերությունը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում մեծ ջանքեր է գործադրում հզորությունների առավելագույն օգտագործմամբ նվազեցնել արտադրական ծախսերը, կրճատել աշխատատարությունը, փոփոխել արտադրական կառուցվածքը, որոնց շնորհիվ իջեցնել արտադրանքի ինքնարժեքը՝ ապահովելով բարձր շահութաբերություն:

Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

2009 թվականին նախատեսվող աշխատանքներ.

- նոր ոսկերչական իրերի մշակում և արտադրություն,
- նոր ժամացույցների մոդելների (ռուսական և շվեյցարական մեխանիզմների բազայի վրա) արտադրություն,
- նոր տիպի հոբելյանական մեդալների, հուշամեդալների, պետական շքանշանների և մեդալների արտադրություն.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքերը և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

05 մայիսի 2009թ.

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր տնօրեն

Վահան Խաչատրյան

Գլխավոր հաշվապահ